

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1. Ձբաղվածություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը հանրապետությունում 2005թ. հունվար-մայիսին, ըստ գնահատման, կազմել է 1208.2 հազ. մարդ, որի 91.3%-ը կամ 1103.0 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 8.7%-ը կամ 105.2 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չեն ունեցել աշխատանք, գրանցվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

2005թ. մայիսի վերջի դրությամբ վերոհիշյալ գործակալությունում հաշվառման կանգնած 132.7 հազ. աշխատանք փնտրողներից 95.3%-ը կամ 126.4 հազ. մարդ եղել են չզբաղվածներ: Գործազուրկի կարգավիճակ ստացել են չզբաղվածների 78.0%-ը կամ 98.6 հազ. մարդ:

Աշխատուժի առաջարկն ըստ ամիսների 2005թ.¹

(ամսվա վերջի դրությամբ)

	Աշխատանք փնտրողների թվաքանակը		նրանցից՝ չզբաղվածներ		նրանցից՝ գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	2004թ. նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	2004թ. նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	2004թ. նկատմամբ, %
հունվար	139.8	94.3	135.7	92.4	106.7	90.3
փետրվար	138.9	93.0	134.9	91.1	106.3	89.6
մարտ	138.3	92.4	106.0	74.5	89.6	97.8
ապրիլ	135.8	91.1	130.9	88.8	103.2	88.0
մայիս	132.7	89.7	126.4	86.5	98.6	85.0

Տարեսկզբից աշխատանքի են տեղավորվել 3.0 հազ. մարդ, նրանցից՝ կանայք՝ 53.3%:

2005թ. մայիս ամսին վերոնշյալ գործակալությունում գրանցված 1.6 հազ. չզբաղվածներից 1.0 հազարը կամ 62.5%-ը ստացել են գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից դուրս են եկել 6.1 հազ. չզբաղված աշխատանք փնտրողներ, նրանցից 0.7 հազարը կամ 11.5%-ը՝ աշխատանքի տեղավորման կապակցությամբ:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի 2005թ. մայիսին¹


(ամսվա վերջի դրությամբ)

	Աշխատանք փնտրողների թվաքանակը		նրանցից՝ չզբաղվածներ		նրանցից՝ գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	2004թ. մայիսի նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	2004թ. մայիսի նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	2004թ. մայիսի նկատմամբ, %
ք.երևան	28.9	88.7	28.7	88.6	25.1	88.1
Արագածոտն	2.7	112.5	2.0	95.2	1.4	100.0
Արարատ	5.1	92.7	4.5	84.9	3.4	85.0
Արմավիր	6.1	73.5	5.8	69.9	3.8	70.4
Գեղարքունիք	7.9	92.9	7.3	88.0	4.8	84.2
Լոռի	26.8	96.8	26.3	95.6	20.8	94.5
Կոտայք	7.4	93.7	6.8	88.3	5.0	90.9
Շիրակ	26.3	85.1	25.1	81.5	18.5	74.0
Սյունիք	13.4	81.7	13.0	79.8	10.9	82.0
Վայոց ձոր	2.5	108.7	2.0	87.0	1.5	88.2
Տավուշ	5.6	101.8	4.9	96.1	3.4	97.1
Ընդամենը ՀՀ	132.7	89.7	126.4	86.5	98.6	85.0

¹ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներով:

Պաշտոնապես գրանցված գործազուրկներից 69.2 հազ. մարդ կամ 70.2%-ը կազմել են կանայք: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում 2004թ. մայիսի նկատմամբ աճել է 0.7%-ով: Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2005թ. մայիսի վերջին կազմել է 905 մարդ, այդ թվում՝ 63.6%-ը կամ 576-ը՝ բանվորական մասնագիտությունների նկատմամբ:

Ըստ մասնագիտությունների աշխատուժի նկատմամբ գործատուների պահանջարկը և թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածությունը



Աշխատուժի նկատմամբ գործատուների պահանջարկն ըստ մասնագիտությունների 2005թ. մայիսին¹

Մասնագիտությունների անվանումը	Ընդամենը	Պրից՝ ամսվա վերջի դրությամբ
Ազատ աշխատատեղեր	1202	905
Ծառայողներ, ընդամենը	412	329
<i>Նրանցից՝</i>		
տնտեսագետ	3	1
ինժեներ	10	-
բժիշկ	192	192
մանկավարժ	52	49
իրավաբան	3	2
գյուղատնտես	1	-
այլ մասնագետներ	151	85
Բանվորներ, ընդամենը	790	576
<i>Նրանցից՝</i>		
խառատ	28	19
փականագործ	34	17
մեխանիկ	6	5
էլեկտրիկ	11	8
ատաղձագործ	10	3
վարորդ	36	25
եռակցող	26	18
կոշկագործ	-	-
կարող, մանող, գործող, ջուլիակ	85	78
բանվորական այլ մասնագիտություններ	257	151
մասնագիտություն չպահանջող աշխատատեղեր	297	252

¹ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներով:

Թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածության դինամիկան ըստ ամիսների¹, 2005թ.

(ամսվա վերջի դրությամբ)

	Աշխատուժի նկատմամբ գործատուների պաշտոնապես ներկայացրած պահանջարկը, մարդ	Զբաղվածների թվաքանակը մեկ թափուր աշխատատեղի հաշվով	
		մարդ	%
		նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ
Հունվար	956	142	63.7
Փետրվար	1058	127	89.4
Մարտ	1011	133	104.7
Ապրիլ	1118	117	88.0
Մայիս	905	140	119.7

Գործազրկության նպաստի միջին չափն ըստ ամիսների¹


(ամսվա վերջի դրությամբ)

	Նպաստառու գործազուրկների թվաքանակը, հազ. մարդ		Գործազրկության նպաստի միջին չափը, դրամ	
	2004թ.	2005թ.	2004թ.	2005թ.
Հունվար	5.4	3.5	3503	6363
Փետրվար	5.9	4.1	3154	6438
Մարտ	6.2	4.9	3267	6696
Ապրիլ	6.2	5.7	3236	6349
Մայիս	6.1	6.9	3274	6481

Պաշտոնական գործազրկության մակարդակն ըստ ամիսների¹

(ամսվա միջինը, գնահատական, %)

	2004թ.	2005թ.
Հունվար	9.8	9.0
Փետրվար	9.8	8.9
Մարտ	9.8	8.9
Ապրիլ	9.5	8.5
Մայիս	9.3	8.2



¹ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներով: